ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1364-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի «Առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող և մատուցվող ծառայությունների (կատարվող աշխատանքների) հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը հաստատելու մասին» N 1364-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 2.1-ին կետի 2-րդ ենթակետի՝

ա. «բ» պարբերությունը ճանաչել ուժը կորցրած,

բ. «զ» պարբերությունում «առաքման» բառը փոխարինել «տեղափոխման» բառով.

2) 5-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման հատուկ ծրագրերի (այսուհետ՝ բիլինգային համակարգեր) միջոցով հաշվարկային փաստաթղթերը դուրս են գրվում

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N 1504-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով:».

3) ուժը կորցրած ճանաչել 11-րդ կետը.

4) 12-րդ կետը «դեպքերում» բառից հետո լրացնել «և ժամկետներում» բառերով.

5) 19-րդ կետը «սյունակները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Ընդամենը» տողը» բառերով.

6) 21-րդ կետը «ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ» բառերից հետո լրացնել «՝ սույն կարգի NN 1, 2 և 3 ձևերին համապատասխան» բառերով.

7) 23-րդ կետից հանել «Մատակարարի կողմից ճշգրտող հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվում ապրանքների վերադարձման կամ մատուցված ծառայությունների արդյունքների չընդունման (չհանձնման) օրը:» նախադասությունը.

8) հավելվածի NN 1, 2 և 3 ձևերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 1

[1] Դուրսգրման ամսաթիվը			ՀԱՇԻՎ-ԱՊՐԱՆՔԱԳԻՐ (ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ)									[2] Սերիան		[3] Համարը	
[4] Առաքման ամսաթիվը															
												Ճշգրտվող հաշիվ-ապրանքագրի			
												սերիան		համարը	
												Ճշգրտվող հաշիվ-ապրանքագրի դուրս-գրման ամսաթիվը			
			Պայմանագիր												
			[5] Կնքման ամսաթիվը							[6] Համարը					
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)															
Արտադրանք, ապրանք առաքող անձի															
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)															
[9] Անվանումը															
[10] Բանկային տվյալները															
[11] Գտնվելու վայրը															
[12] Վայրը, որտեղից ապրանքներն առաքվում են															
[13] Լրացուցիչ տվյալներ															

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)								
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)								
[16] Բանկային տվյալները			N					
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)								
[18] Լրացուցիչ տվյալներ								
[19] Ում միջոցով	Անունը, ազգանունը							
	լիազորագիր	համարը						
		ամսաթիվը						
[20] Մատակարարման (առաքման) եղանակը								
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)								

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN ը/կ	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1.					
Ընդամենը					

ԱՌԱՔՈՂ _____ ՍՏԱՑՈՂ _____

(անունը, ազգանունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

[1] Դուրսգրման ամսաթիվը			ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ (ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ)	[2] Սերիան	[3] Համարը
[4] Տեղափոխման ամսաթիվը					
			Պայմանագիր		
			[5] Կնքման ամսաթիվը	[6] Համարը	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արտադրանք, ապրանք տեղափոխող անձի					
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					
[9] Անվանումը					
[10] Բանկային տվյալները					
[11] Գտնվելու վայրը (հասցեն)					
[12] Վայրը, որտեղից ապրանքները տեղափոխվում են					
[13] Տեղափոխման եղանակը					
[14] Տեղափոխվող արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)					
[15] Լրացուցիչ տվյալներ					
[16] Տեղափոխվող արտադրանքի, ապրանքի քանակը և արժեքը					
NN	Տեղափոխվող	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	

ը/կ	արտադրանքի, ապրանքի անվանումը				Արժեքը
1	2	3	4	5	6
1.					
Ընդամենը					

ՏԵՂԱՓՈԽՈՂ _____ ՍՏԱՑՈՂ _____

(անունը, ազգանունը) (անունը, ազգանունը)

Ձև N 3

[1] Դուրսգրման ամսաթիվը			ՀԱՇԻՎ-ԱՊՐԱՆՔԱԳԻՐ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիան	[3] Համարը
		20 թ.			
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ-ապրանքագրի	
		20 թ.		սերիան	համարը
				Ճշգրտվող հաշիվ-ապրանքագրի դուրսգրման ամսաթիվը	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվը	[6] Համարը	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
[9] Անվանումը	
[10] Բանկային տվյալները	N
[11] Գտնվելու վայրը	
[12] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի			
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)			
[14] Անվանումը			
[15] Բանկային տվյալները		N	
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)			
[17] Լրացուցիչ տվյալներ			
[18] Ում միջոցով	Անունը, ազգանունը		
	լիազորագիր	համարը	
		ամսաթիվը	

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN	Ծառայությունների (աշխատանքների)	Չափի	Ընդհանուր	Միավորի	Արժեքը

ը/կ	անվանումը (բովանդակությունը)	միավորը	ծավալը կամ ժամանակաշրջանը	գինը	
1	2	3	4	5	6
Ընդամենը					

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ (ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ)

_____
(ստորագրությունը)

_____
(անունը, ազգանունը)

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (ԱՇԽԱՏԱՆՔ) ՍՏԱՑՈՂ

_____
(ստորագրությունը)

_____ »:
(անունը, ազգանունը)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հոկտեմբերի 1-ից: